ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-7)

իրականացնում է Օրենսդրական դաշտի ապահովման նպատակով մարզի համայնքների ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից տրված հրամանների ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ անհրաժեշտ խորհրատվություն տրամադրելու աշխատանքները:

Օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով համայնքների ղեկավարների աշխատակազմերին տրամադրում է մեթոդական և գործնական օգնություն .

Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է մարզային ենթակայության կազմակերպությունների և ՓԲԸ-ների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրումը և օրենսդրությանը հակասող իրավական ակտերի վերացումը կամ կասեցումը, մարզպետի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշման նախագծի նախապատրաստումը:Նախապատրաստում է ՀՀ կառավարության և ՀՀ Վարչապետի քննարկմանը ներկայացվող որոշումների նախագծեր: Իրականացնում է Մարզպետի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի ղեկավարի հրամանների նախագծերի նախապատրաստումը, Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նախագծերի իրավական ակտերի համապատասխանության աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

<<Իրավագիտություն >> մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 20.02.2013 թ. ժամը 14:30-ին, Ք.Եղեգնաձոր:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.2-24)

Մասնակցում է `ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետ՝ Մարզ/ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ագրարային ոլորտի տնտեսավարող այլ սուբյեկտների արտադրության կազմակերպման և զարգացման գործընթացին, Մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներին:

Մասնակցում է գյուղատնտեսական ,բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը, Ինչպես նաև բնական աղետների հետևանքների ուսումնասիրության, աղետի պատճառած վնասի չափի որոշման աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն,

Մրցույթը կկայանա 20.02.2013 թ. ժամը 11:00-ին, Ք.Եղեգնաձոր:

1,2 կետերուն նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝
քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2) տիրապետում:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
արական սեռի անձինք ՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր
ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2013թ հունվարի 30 -ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
/ հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5, հեռ 2-22-52, 2-55-95/: